# ՏԱՂԱՐԱՆ
# ՓՈՔՐԻԿ։

Շարահիւսեցեալ ՚ի Սիմէո-
նէ՝ սրբազան կաթուղիկոսէ
ամենայն Հայոց՝ յայլ եւ այլ
ժամանակս։

Որոյ եւ հրամանաւն այժմ նոր տպեցաւ
կրկին՝ ՚ի պատուիրել առաջնոյ դպրեվանուցն,
զի բաժանեսցին առատապէս խնդրողաց։

՚Ի Թուին փրկչին, ՌՉՀԷ։
Եւ ՚ի մերում թուին՝ ՌՄԻԶ։

## ՚Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ
## ԷՋՄԻԱԾԻՆ։

՚Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լու-
սաւորչին մերոյ։



Ա̃ծածին մայր քրիստոս որ,
Ը̃ մեր մաղթեա՛ քոյ միածնի։

Տաղ ՚ի սուրբ ծնունդն Քրի Դրինաց որդւոյ Աստուածածնին. ասացեալ ՏՆ Սիմէոնի Երեւանցւոյ Կաթողիկոսին.

(Ա)



որհուրդ մեծ յայտնե-
ցաւ այսօր յաշխարհի.
և ուրախութիւն երկնի
և երկրի. զի Աստուածն բար-
ձանց յերկիր խոնար-
հի. ՚ի խնդիր և յայց խուրոյն սյառ-
կերի. որ ահա ՚ի կուսակէս այսօր ծը-
նանի. և ՚ի յօրօրոց եդեալ օրօրի.
վա՛յ երգեսցուք. օր, օր, օր, օր, օր.
իմ՛ Աստուածորդւոյս, օր, օրօր, օր օր.
Որ յերկինըս յաթոռ անմատոյց
բազմի. այսօր ՚ի մըսուր անբանից
դընի. որ շնորհէ ըզպալատոյս բոլոր աշ-
խարհի. ահա խմոյ ստեանց կաթին
կարօտի. որ ահա ՚ի յայցելս նինջն
ստակած մի. զի բարձցէ ըզքուն մե-
ղացն մայր. վա՛յ երգեսցուք, օր՛.


Աճե

Աղեւորիս քեզ աղաւմ եւ մայր մեր
եւս . եւ հաւմայն ծննդոց ձերոց ուամ
ահա ։ զի փոքրիկ մանուկս իմ զոր
այսօր ծընայ . ՚ի յարուցանել ըղձ մե_
ուեալըղ դայ ։ ով ահա ՚ի դիրկս
իմ խանձարրօք պատոլ . զի լուծցէ
ըղկապ մեղացն եայի ։ ուստի ինձ
ձայնակցեալ՝ երգեցէք օր օր . իմ
ա͞ծ որդւոյս մեղմօրէն օր օր ։

Նորին Տաղ առ սուրբ Աչափինն ։

(Բ)

Սիրելի մայր իմոյ փրկչին . մա_
րիամ ո͞ւ կոյս . մարիամ ո͞ւ կոյս .
միայնակ յոյս իմոյ անձին տխրա_
մայր։ զի բաց ՚ի քէն յայլ ուստեք
ձայր չունիմ ձայր ։
՚Ի ցուրտս քո անկեալ ողբամ . մա_
րիամ" ։ ըղձ ցաւս անձին իմոյ բա_
նամ տխրամայր" ։
Մոլորեցուց զիս թշնամին . մարիամ
ո͞ւ" . ՚ի շաւիղս քոյոյ միածնին տէր" ։

Կարէ ՚ի մեղս զանազան․ մարխամ
ճը․ ապա զիս յոյժ թշուառական
տիրամայր․

Օտարացայ ՚ի քէն սէր իմ․ մայր․
յարեցայ առ թշնամին իմ տիրա․
Նման եղէ կամաւ ծառայ․ մայր․
որ կորուսեան խղճանաց տիրա․
Իսկ արդ այժմ զինչ արարից․ մա-
րխամ․ թէ ոչ առ մայրդ դիմեցից
տիրամայր․
Կ՛յոյս ամէն վշտացելոց․ մարխամ
ճը կոյս․ մարխամ ճը կոյս․ ալա՛ և
գեղ խմոց ցաւոց տիրամայր, զի բաց
՚ի քէն յայլ ուստեքէ․

Գործն՝ առ անհնարինն Յն․, առաջեն
՚ի հիւանդութեանն․

(Գ)

Սէր անուն յո՛ սիրելի․ սիրահա-
րեալդ ՚ի հոգիս․ ահա զոր սիրեիր
դու յոյժ՝ հիւանդացեալ մեռա-
նի․ (կրկնէ) ահա զոր սիրէ․
Ի սէր ունայն երկրաւորս․ յիշա-
տեն իմ ՚ի սիրոյդ․ պատահեցայ ա-



ռա․

Բաղձակաց · յորոց հարցս անխնայ ·
կրկ ։ պատուհէ"։

Ծերկացուցին զիս ՚ի բարեաց · և
թիւր չարեօք խոցեցին · յամի վի-
րաւորեալ, ոտիւ մեռեալ ընկեցին ·
կրկնէ ։ յամենայնի վի"։

Կոչեալ ահա ողորմելի, անկեալ
յերկիր կիսամահ · անօգնական և
անդարման, կամ ՚ի յետին դառ-
նութեան ։ կրկնէ ։ անօգ"։

Օրինականքն և առաքինքն, ոչինչ
օգնել կարացին ։ զի և ինքեանք գո-
լով տկար, քեզ կարողիդ կարօտին ։
կրկնէ ։ զի և ինքեանք"։

Պաշտելոյդ իմ սամարացի, իմ միայ
նակ յոյս և ճար · արա՛ առ իս ողոր-
մութիւն, որ միայնդ ես բարերար ·
կրկնէ ։ արա՛"։

Իսկ թէ և դու զանց արասցես, ո՞ւմ
մընացից եղկելիս · և մնանաձեանդ իմ
հաստատի, թէ ողորմած անուա-
նիս ։ կրկնէ ։ և մնա"։

Ե՛լ ՚ի խնդիր կորուսելոյս · քանզի


գին

գինեմ արեան քոյ • աղաղակեցի՛ և
դարձմանեա՛ն, զի տաց ըղձիւաւ աւ-
նուէան քոյ ։ Երկնէ ։ աւող" ։

Նորին՝ աղօ̃թք Էջմիածին աղաւթեալ 'ի
Հետեւեալ Հայրէ ։ (Դ)

Ինտարանջեալ վայրէս ահա՛ աւրն
ծայեմ քեզ ողջոյն • իմ անձնվեան և
անարատ՝ սրբասընունդ սրբելոյդ
սրբելոյդ ։ շնորհամնի ծնողիդ
իմոյ՝ ածակերտ որբ տեղւոյդ • յոր
մէ հայցեմ հեծեծանօք ։ զիս մի՝
մերժեր 'ի սրբոյդ 'ի գթոյդ ։ զի
դու ես մայր գորովագութ՝ սար-
տուցելոյ որդւոյս քոյ ողջոյս քոյ ։
Սէր ծնողիդ ո՛չ թողու զիս՝ համք
չեղ երբէք յիշաէի • յորմէ հետև
բաժանեցոյ՝ արտասուաւ ո՛չ դադարի
դադա" ։ ուր և իցեմ զինչ և ատ-
նեմ՝ ըղձեզ ուշիմ 'ի մտի • ընկա՛լ
ասքեզ զիս վերստին, զխորթացեալ
որդիս քո որ" ։ ընկա՛լ մայր իմ 'ի
գիրկս քո, մի՛ մերժեր զիս 'ի սրբոյ
'ի գթոյ ։

Ինձ սև լինիցէր ժամըն այն՝ յորում
ի ծոցոյդ ելի • և խաւարին խոր-
հուրդըն այն, որ արար զիս խողխա-
ղել խողխա": Չէր լուսանայցէր օրըն այն՝
յորում ես ընդէջ թողի • ընկա՛լ
մայր իմ զիս վերստին, ընդ սպառու-
ցեալ որդիս քո որ":

Մաշեցին աչա զոսկերս իմ՝ բաղ-
ձանք և սէր տածողիդ • քաղեաց
զհոգիս և ընկեանս իմ, կարօտու-
թիւն ծընողիդ ծնօ": Ո՜հ թէ որքան
քաղցր իցէ լեալ վայելելն զքեզ
զմայրելիդ • ընկա՛լ մայր իմ զիս
վերստին, ընդ խորթացեալ որդիս
քո որդիս քո:

Էջմիածին քաղցրիկ անուն՝ ըշտե-
մարան շընորհաց • զորս յորդօրէն
գեղափայլես, ի միտս քոյոց զա-
ւակաց զա": Ո՜հ աւաղ ինձ որ ես
միայն՝ զրկիմ՝ ի քոց խրախճանաց •
ընկա՛լ ո՜վ Սբ. Էջմիածին":

Ո՜չ թէ իցէր անգամ մի և ս՛ընդ ցան-
կա՛լիդ տեսանել զՍբ. աթոռդ և զմա

 քուր

քուր հողք ։ գետնաթաւալ համ-
բուրել համ"։ այնուհետեւ ո՛չ էր
ինձ հոգ՝ թէ լինիցեր մեռանիլ. ըն-
կա՛լ ո՛վ մ̃ր Էջմիա"։

Նոյա ասեմ ես երանի՝ որք կան
թաղուեալ 'ի ծոց քոյ. յորոց յե-
տինն է լաւ քան զիս. որ եմ 'ի քեն
արտաքոյ առ"։ Թող չիցէ ինձ բո-
լոր աշխարհ որ առանց քեզ չէ պի-
տոյ. ընկա՛լ մայր իմ Էջմիածին ըզ"։
Էջմիածին յոգներախտ մայր՝ Նայ
եաց յորդիս անպիտան. որ կա՛մ ան-
կեալ յերկիր օտար՝ և չունիմ զոք
օգնական օգնու"։ զքեզ աղաչեմ մի՞
թողուր զիս կարօտ քումըդ տե-
սութե. ընկա՛լ մայր իմ Էջմիա"։

Նորին դարձեալ առ մ̃ր Էջմիածին ներ-
բողեան հանդերձ խնդրուածովք ։

( Է )

Ի բոլոր աշխարհի մէջ գոյ քեզ նը-
ման. գեղեցիկ ազնիւ և չքնաղ խո-
րան ։ մ̃ր կոչեցից՝ ըզքեզ անընման.
մ̃ր Էջմիածին՝ աթոռ յիսուսեան ։

 Սրխ

Սխրագործ յօրինմամբ՝ նոր իմն
յայտնեցար ։ 'ի յերկրի երկին՝ խոր
հրդեհածք ցուցար ։ զի իջմամբն ա͞յ՝
հրաշակերտեցար , որ էջ միածին՝
լուսաձև տաճար ։
'Ի միոյ ծնողէ՝ հօրէն ընտրեցար ։
միոյ միածնի՝ նորին հարսնացար ։
տեառն մի աղաւնի՝ և մի կատարելոյ
որ էջ միածին՝ լուսափայլեցար ։
Մի նորոգ արեգակն՝ տանս արա-
քայութեան ։ և յատուկ պարծանք՝
որդւոցս արամեան ։ առ որ ածինք
համայն՝ բերանաբաց կան ։ որ էջ
միածին՝ դաս ընդ հանրական ։
Է՛ ծնող գթառատ՝ որ էջ միածին ։
զարթիր և հայեաց՝ 'ի ծնունդըս
քոյին ։ որք 'ի ձեռս նեղչաց՝ հա-
նապազ ձաղին ։ և գըլուխ 'ի կոր՝ 'ի
վիշտս մաշին ։
Օրէն ազգին հընոյ՝ յակոբեան տոհ-
մին ։ թշնամիք մեր արդ՝ և մեզ տի-
րեցին ։ և 'ի ներքոյ ոտից՝ կոխեն ա-
քարին ։ ուր է ա͞ծ ձեր՝ և մեզ ասացին ։

Նախատինք նախատողաց՝ ընդ մեզ
պատեցին. և ընդ մեզ տեղեաց՝ զար-
ջութք լցին. մինչև յե՞րբ համբե-
րեա՝ ապարմանց նոցին. թէպէտ չա-
րիք մեր՝ զքեզ բարկացուցին.
յերեսս անկեալ գոչեմք՝ առ մայրդ
գըթած. արի՛ ՚ի խնդիր՝ քոյոց զա-
ւակաց. և փրկեա՛ ՚ի ձեռաց՝ անի-
րաւ նեղչաց. և ՚ի յարձակմանց
այլ և այլ թշնամեաց.

Նորին՝ առ ՍԲ Գրիգոր Լուսաւորիչն
մեր. (Զ)

Սո՛ւրբ լուսաւորիչ մեր, կրկնէ. բաւ
է արդ՝ որքան ննջեցեր. կրկնէ.
Զարթի՛ր զօրէրթուն անուան, կրկ՛՛.
մինչև յե՞րբ նընջես դու ՚ի քուն. կրկ.
՚ի մի՛տ ած ընդ քո ծնընդեանս, կրկնէ.
և զարեանդ վըտակաց ընդմխմունս. կր.
Յիշեա՛ զորըս կըրեցեր, կրկ. վասըն
մեր ո՛վ գըթած հայր մեր. կրկնէ.
Ահա քոյսասուն մանկունք, կրկ՛՛. և
համայն քրտանց քոց ծնունդք. կրկ.
Մատնեալք կան անօրինաց, կրկ՛՛. և

 ՚ի

Ի ձեռս զանազան նեղչաց ։ երկ" ։
Յորոց անխրնայ ձաղին , երկ" ։ յուս
տեցքէ զօգնութիւն չունելոյն ։ երկ" ։
Իսկ քոյդ մաքուր թագուհիդ ,
երկ" ։ և միակ ընտրեալ պաշտպանիդ ։ երկ" ։
Իբրև այլ մի նայեաց , երկ" ։ զորդէ
նակի ողբըս յօրինէ ։ երկ" ։
Վասն խուրոյ այրութե , երկ" ։ և ման
կանցն թշուառութե ։ երկ" ։
Արի՛ արի՛ ով հայր մեր , երկ" ։ մի՛
հայիր դու ի մեղս մեր ։ երկ" ։
Վասն քոց չարչարանաց , երկ" ։ յօգ
նութի հա՛ս քոց զաւակաց ։ երկ" ։
Ո՛չ զի թշնամիք մեր , երկ" ։ գլուխա
ցեն թէ ուր է փրկիչ մեր ։ երկ" ։
Զի քև և ի ձեռըն քոյ ։ երկ" ։ օրհն
նեսցուք ըզ տէր այ մեր ։ երկ" ։

Նորին՝ ի դէ հայոց այբուբենի տառից ․
Որ եր Էջմիածին այլեւս , և ի սահմանէ պա
տասխանի տառ նոսա ։ ( Է )

Ոդիրկ ծնողիդ մերոյ հանգչել երբ
լեցէ , ով մայր՝ երբ լեցէ ․ և տեսութե



քով

քով ըղձմայլել ե՞րբ իցէ, ով մայր
ե՞րբ իցէ։ Ո՛հ. զմայրական սէրդ ՚ի
գործ ածեալ ե՞րբ իցէ, ով մայր.
ե՞րբ իցէ. ըղձացունքս քո ժողո-
վելն ե՞րբ իցէ, ով մայր ե՞րբ իցէ։
Սիրտ իմ արդէն նոր ՚ի նորոյ մորմո-
քի, որդեակք, մոր"։ սիրով ձա-
գուցդ իմոց աղիքս դալարի, որ-
դեակք, դա"։ Ո՛հ. զի բերկրութի-
մօրն է որդւովք յիւրայէլի, որդեակք
յի"։ բայց ոչ գիտեմ կամք փե-
տայիս ե՞րբ իցէ, որդեակք. ե՞րբ իցէ։
Իսկ այս զի՞նչ են արգելմունք
քոյդ կամաց, ով մայր, քոյդ կա"։
որ չելանես դու ՚ի խնդիր քոց ման-
կանց, ով մայր, քոց մանկ"։ Ո՛հ. զի
յատկութիւն է ճշմարիտ ծնողաց, ով
մայր, ծնո"։ Դու միշտ տածող ես ըն-
դունող զանձկայց, ով մայր զա"։
Մօրն է յատուկ առ որդիս իւր
գոլ գըթած, որդեակք, գոլ գը"։
բայց թէ որդիքն իցեն արբեալք ՚ի
մեղաց, որդեակք ՚ի մեղաց։ Ո՛հ.

 բայց

բարձի Թողլի եղեալք առայս 'ի ծնո-
ղաց, ո՛րդեակք, 'ի ծնո" • Լինին ոմն
անառակն այն խոզարած, ո՛րդեակք •
խոզարած ։

Դիմք յանցաւէ որ ըստ անառակին յի-
րաւէի, ո՛վ մայր, յի" • բայց եմք ծը-
նունդ քումդ սբյ արգանդի, ո՛վ
մայր ար" ։ ո՛Հ • և գին արեան քու-
մըդ մաքուր փեսայի, ո՛վ մայր,
փե" • առ որս գիտեմք և սիրտ ծնո-
ղիդ տոչորի, ո՛վ մայր, տոչորի ։
Ո՛վ Հոգեծին և գըթառատ ծընող
մեր, մա՛յր մր, ծը" • ա՛ռ ընդ քեզ և
զլուսաւէորիչ Հայրըն մեր, մա՛յր
մր, Հայրըն" ։ ո՛Հ • ցաւէակցաբար
աղաչեցէ՛ք ըղբօր մեր, մա՛յր մր, ըղ-
բօր" • ձերոց անտերունչ զաւէակացս
այց առնել, մա՛յր մր, այց առնել ։
Նոյնպէս և դու ո՛վ բազմերախտ
Հովիւէ մեր, և Հայր, Հովիւէ մեր •
արի՛ 'ի քնոյդ բա՛ւէ է որքան ննջեցեր,
Հա՛յր մր, ննջե" ։ ո՛Հ • և ըղստուկալք
զարչարանս 'ի մէտ բեր, Հա՛յր մր,

 'ի

Ի մի՛տ․ Նոքօք ծննեալ որդւոցըդ
քոց խնդիր ե՛լ, հա՛յր ՟մե, խն՞։
Տէ՛ր ողորմած և բարերար փրկիչ մեր,
յ՟մ, փր՞․ սոցին մանկունք պաղատա֊
նաց լսօղ լե՛ր, յ՟մ, լռ՞։ ո՞հ․ ՚ի սէր
սոցա ըզմեզ խնայեա՛ մի՛ մերժեր, յ՟մ,
մի՛՞․ զի դու ես յոյս և ապաւէն և
՟տր մեր, յ՟մ, և ՟տր մեր ։

Նորին՝ առ ՟տճաչոյ տաճարն սուրբ
Երուսաղէմ։ (Բ)

Պբոլորաշխարհի՝ յառկացել տեղի․
վայր ՟տծակոխ՝ վիճակ տեղւոյ նի․
քաղաքաց համայնից՝ գովեալ թա֊
գուհի․ ՟մբ եկեմ՝ քաղաք շնորհալի․
Սիրելի նախանձոց՝ հանուրց արար
չին․ տեղի հանգստեան՝ անմահ ար
քային։ վ՟ա ՚ի համայն՝ գիրս ՟տծայ
քն՝ գովաբանութիւնք՝ քեզ վերա֊
ծառին։
՚Ի հրնուածս օրինաց՝ և մարգարէից․
դու հանդիսարան՝ բոլորից ճա֊
ռից։ յորս էիր դու ՟ա՝ երկինս աստ

զալից ․ Ծբ եՃմ մատեան Հըրաշից ․
Մի ծաղիկ Համասփիւռ՝ աղանց
ըղձալի ․ ՚ի Հինն և ՚ի նորս՝ Համանկ
ցանկալի ․ քանզի ՚ի քէն բուրեաց՝
Հոտն այն Հրաշալի ․ որ շնորհեաց
ըզկեանս՝ բոլոր աշխարհի ։

Երկինք երկնից որոյ՝ չէին բաւա-
կան ․ նըմա եղեր դու՝ յարկ և Հիւ-
րաբան ։ որ ՚ի քեզ կատարեաց՝
զգործ տնօրէնութէ ․ որով և սըր-
բեաց՝ զաշխարհս ամենայն ։

Օրհնեցէն քարինք և Հողք և ջուրք
քոյին ․ յորըս շրջեցան՝ ոտք իմոյ
փրկչին ։ որք եղեն շտեմարանք՝
շընորհաց նորին ․ ՚ի բաշխել որոց՝
Հաւատով դիմին ։

Գոցանք բարտուղիէ՝ Հազար երանի ․
որք սիրեն ըզքեզ՝ ՚ի սրտէ և յոգի ․
և ունին զանուն քո՝ ծրարեալ ՚ի
մըտի ․ ոչ ՚ի շահ ինքեանց՝ միայն
՚ի լեզուէի ․

Իրկանի ներհակօք՝ յայս մտօ ձայ
նեցար ․ գեղեցիկ ևանեան՝ յոյժ

խորհրդաբար ։ զի առ այնս որոտմա-
դէմ՝ ցուցանիս կերպար ․ և քոյ
սիրողաց՝ դաշն լուսապարգեալ ։
յիշեկիր անկեալ և ես՝ ՚ի հե-
ռուստ վայրաց ․ տամ համբոյր
հոգւոյ՝ քոց սրբոց ոտիցդ ։ զի ՚ի
քեզ գանձելոց՝ յանձառելից շնորհաց ․
ընկալայց զմասն ինձ՝ նոցին փշրա-
նաց ։

Նորին՝ ապաշխարան․ յանձնն իւր ։ ( Թ )

Ապաշխարանաց ես արժանի ․ ով
դու անձն իմ ողորմելի ․ զի յարա-
ժամ զքեզ տեսի, մեռեալ ՚ի մեղս՝
բա՛ւ է զարթի՛ր, զարթի՛ր, և զգաս-
տացի՛ր ։

Ունայնութեանց հետևեցար, նանիր
կենիս անբանաբար ․ և առաւելին
դու ո՛չ լուեար, որ միշտ դոչէ՝ բա՛ւ
է զարթի՛ր ։

Բամեալ ՚ի քեզ բռնեղս անհուն ։
Եօթնից չարեացն պարապեալ տուն ․
և ո՛չ արթնուս այլ կաս ՚ի քուն ․

աւաղ ՚ի քնոյդ բա՛ց է զարթ"։
՚ի դրոց մէջ իսկ ուսեալ ես, և
ըզ հաճոյս տ̃նըդ գիտես. ուրեմն
յոյժ դանի արժան ես, ՚ի յո՛չ առ-
նելդ՝ բա՛ց է զարթի՛ր, զար"։
Դման չար և վատ ծառային, ո՛չ
զահեցեր զքանքար քոյին. ուրեմն
՚ի խաւարն արտաքին, և դո՛ւ հան-
ցիս բա՛ց է զարթի՛ր"։
Ե՛ւ դու անձն իմ՝ ո՛չ զարհուրիս,
որ յար ՚ի մեղս թաւալիս. թէ ՚ի
տ̃է թաքչիլ կամիս, լո՛ւր ՚ի դաւ-
թայ՝ բա՛ց է զարթի՛ր"։
Եթէ ասես այսօր մեղայց, և ՚ի վա-
ղիւ՛րն զղջացայց. լո՛ւր առակին
զկարծխածդ բա՛րձ, այսօ՛ր դարձի՛ր՝
բա՛ց է զարթի՛ր"։
Բոռեալ անձն իմ՝ մի՛ ասիցես, թէ
յոյժ մեղանս գործեալ եմ՝ ես լո՛ւր
կենսատուէին դարձի՛ր և տե՛ս, ըզ
գութ նորին բա՛ց է՝ զար"։
Գոչեա՛ առ տ̃ըն բարերարը, որում
ոչինչ է անհընար. լո՛ւր մաքսաւո-

քին զինչ արար, և քեզ տանէ՝ բան"։
Ըստ գործոց քոց նա ոչ տանէ,
եթէ դարձցիս՝ զի յոյժ քաղցրէ.
այլ հեզաբար ըզքեզ կոչէ, ըստ
Իբրուն խոստմանն՝ բանն է զար"։
Աւրոյ աղբիւր ամենակոյս, ողոր-
մեա ինձ մոլորելոյս. զի դու ես մե-
ղաւորացոյս. զիս յուսադրեա՛ ասա-
զարթիր, զարթիր՝ ինձ զօրացիր։

Նորին՝ Բողոք Յիսուսի կենդանարարոյս ։

(Ժ)

Ի յայս անկայուն՝ և սուտ աշխար-
հէս, ես յո՞ փախեայց, ո՜հ ո՜հ ո՜հ.
կամ ո՞ւր երթայց ես։ ո՜հ, միայն
առ քեզ ապաւինեմ, տէր իմ, տէր
իմ. տէր իմ՝։ աս մինչև յե՞րբ, ո՜հ
ո՜հ ո՜հ, կեղեքէ զկեանս իմ։
Սուտ երևութիւն թանկարժէս կազ-
մէ, որովք զիս միշտ, ո՜հ ո՜հ ո՜հ.
անդադար պատրէ։ ո՜հ, ինձ ըն-
տանի թշնամի է, տէր իմ, տէր
իմ, տէր իմ ։ աս մինչև"։

զի կեանս իմ ըղձաս բաղձօք փոր_
ձեցի · զոչինչ գտի, ո՜հ ո՜հ ո՜հ, 'ի
ամէն հաճատոր ։ ո՜հ, ուստի վա_
րանեալ մընացի, տէր իմ, տէր" ։
Մերթ եթէ տայ ինձ տակաւին մի
քերկրիլ · անդրէն կուտէ, ո՜հ ո՜հ
ո՜հ, բաղմիցըս տրտմիլ ։ ո՜հ · և ըն-
դերկըրիլըս տայ ցաւիլ, տէր" ։
Ներքեմն 'ի զբօսանս եղանել դրդէ ·
անդրէն փուլթով, ո՜հ ո՜հ ո՜հ, զըղ_
ջումն տուբերէ ։ ո՜հ, և 'ի տէրն իսկ
վիրաւորէ, տէր իմ, տէր իմ" ։
Օր մի թէ ըղտւող սէր ինչ ցու_
ցանէ · և քատ կամնցս, ո՜հ ո՜հ ո՜հ,
խբրու յաղթողէ ։ ո՜հ, ընդ մեղէրն և
զլերը ջամէէ՝ տէր իմ, տէր իմ" ։
Կամիր և անտոի իրօք զիս սրտոէէ ·
և իւ բայնոփքն, ո՜հ ո՜հ ո՜հ, սա զիս
մեծացքէ ։ ո՜հ, և նոքօք իսկ զիս
խոցոտէ, տէր իմ" ։
Ի՞ իսկ օրինակ յորումհա կամք ·
յոր իբրու թէ, ո՜հ ո՜հ ո՜հ, հրճոէ_
իմք և խնդամք ո՜հ աղդեօք յետոյ

որքան զղջանամք Տէր իմ"։
Ո՜վ Տէր իմ յո՞ ՚ի մէջ խնայեցեալ յայս
ընտանի, ո՛հ ո՛հ ո՛հ, չարչէս աղա-
տեամ ։ ո՛հ մու ընդ քեզ և մխիթա-
րեամ, Տէր իմ, Տէր իմ, Տէր իմ,
թախանձանեմ՝ ո՛հ ո՛հ ո՛հ, սա զիս
խոցոտէ ։

Նորին՝ ազգուած ընդ աշխարհս այս
խաւարոյ ։ (ԺԱ)

՚Ի քոց ձեռացդ ես ո՞ւր փախեայց,
կամ՝ յո՞ր ուրեք դադարեցայց ։ ո՛վ
դու աշխարհ տուն փորձութեանց,
զուրկ ՚ի բնաճից հաճառատուեց ։
սուտ բարեկամ ընտանի չար, ա-
ճաղ զիս մինչև յե՞րբ խաբես ։ վե-
րստին ասա խաբեցեր ։
Սիրեցի զքեզ դու նենգեցեր, ա-
տեցի զքեզ դու ողսացեր, զինչ ա-
րարի զղջացուցեր, փութով անդէն
մոռացուցեր ։ սուտ բարե"։
՚Ի քոց բերմանց ես պատրեցայ,
յայս որոգայթս ևըս անկայ ։ ա-
ճաղ ինձ որ հաճանեցայ, և գիտե-

լով իսկ խաբեցայ ։ սուտ բարե՛ ։
Մաշեցեր դու զկենս իմ՝ ընդվայր ,
զաւուրցս արարեր ցաւագար ։ զա-
զատուլս իմ՝ դողացար , և արարեր
պաշտօնատար ։ սուտ բարե՛ ։
Իրաւոյն է զոր ցուցանես , զի զթա-
կարթարդ քօղով ծածկես ։ զոր ս՚ի-
րեսդ 'ի դուռս արկանես , և ըղձըն
ծափս հարկանես ։ սուտ բարե՛ ։
յՕրէ յորմէ ըզքեզ ծանեայ ։ ըգտի
ըզքեզ միշտ խաբեբայ ։ զի՞նչ օ-
գուտ որ մինչ ծերացայ , ապա յե-
տոյ լաւ իմացայ ։ սուտ բա՛ ։
Նոյն ես դու միշտ այժմ՝ և յառաջ ,
յիմար է որ քեզ հաւատայ ։ յորոց
մին եմ ես 'ի ներկայ , որ հաւա-
տամ՝ դեռ քեզ ահա ։ սուտ բա՛ ։
Եթէ ծաղկես իբրև զայգի , և դեղ
դեղիս նըման վարդի ։ սակայն փուշ
ես դու թուենալի , նալսթ քոյ հո-
տոյդ գարշելի ։ սուտ բա՛ ։
Եւ ես տացից պատասխանի , ընձ
աշխարհիս նախատողի ։ ես եմ աշ-

 խարհ

խարհ աշխարելի, և տուն փորձուեց
հաւատոյ։ դու ես յիմար և խելա-
գար, աւաղ որ դիտելով խաբիս,
վերստին ահա խաբեցար։

Նորին հառաչանք առ Ած վս̃ թշուա-
ռութեան երկրիս հայոց և մէջ Ազգիս·
ի տճկց̃ թուրքին ձեռաց։ (ժ.ե)

Ո՛վ բարերար և մարդասէր տր̃ իմ
Ած̃ ոլէտական· փրկիչ յս̃ քաղցրիկ
անուն աղբիւր առատ բարութե̃·
որդ ոչ է ժամ արդարութե̃ այլ մա-
նաւանդ գթութե̃· թէպէտ մեղաք
և զտ̃րդ մեր բարկացուցաք· մի՛
թողուր տր̃ ըզմեզ ի սպառ. քանզի
քոյ եմք արարած· վս̃ զի միշտ անո-
խակալ Ած̃ պարծիս և գթած։
Դէկավարիդ ոչ անսացեալ ըս̃ կա-
մաց մերոց ընթացաք· հողմոյ չա-
րին պատահեցեալ յորմէ կարի դա-
նեցաք· հետևեալ էս 'ի զանազան
թշուառութիւնս սահեցաք· քանզի
մեղաք և զտ̃րդ մեր վշտացուցաք·

 մի՛

մի՛ թողուր տ̃ր ըղ"։

Բարձին ՚ի մէնջ հովուէք արթունք
և լրաւորունք մերժեցին․ այլք խմաս
տունք և ուսուցիչք յազգէս մերմէ
սպառեցան․ ա̃ծապաշտ իշխանքըն
մեր ահա իսպառ վերջացան․ քանզի

մեղաք և զ̃ըրդ մեր բար"։

Սուգ ըզգեցան երկինք երկնիւք վս̃
մերոյ կորստեան․ որոց և երկիր
ձայնակցեալ զթշուառութիւնս մեր
ողբան․ զի գինք արեան սահեղծո_
ղեդ յանօրինաց վատնեցան․ քանզի

մեղաք և զ̃ըրդ մեր բարկա"։

Իսկ լուսածին և գերազարդ մայր
մեր ահա մերկացեալ․ իբր ըղպո_
նիկ կին մի անծք ՚ի յայլազգեաց
շօշափել․ մաքուր անօթք և զարդք
սորին ՚ի հրապարակս վաճառեալ․

քանզի մեղաք և զ̃ըրդ"։

Մանկունք սորին և պաշտօնեայք
՚ի թշնամեաց գերեցան․ որդիք ս̃րին
շնորհածինք ՚ի ձեռս նեղչաց մաշո
ձեցան․ միանգամայն հօտ քո փոք

թիկ կայ 'ի յետին դատանըն · քան° ։
Եկեղեցիք երկնանմանք խաւարե-
ցեալք 'ի լուսոյ · իբր ըզ փառաւոր ե-
ղեալ կորեան յոտից անօրէնց ներքոյ ·
յորոց ծաղեցեալ առակին թեղիք
տէրունեծերդ քոյ · քանզի մե" ։
Օրէնք և կարգք և հոգաբարձք մե-
րոյս անբիծ հաւատոյ · կանոնք սըր
բազմանք և սըրբութիւնք անճառելւոյդ
խորհրդոյ · աhա 'ի ձեռս անհաւա
տից՝ յորս հայհոյի անուն քո · քզ" ։
Նման այրւոյ սգացեցի քօղահեր-
ձեալ լոյ անյոյս · հարսնդ մաքուր
զոր սիրեցեր յառաւել սիրով տր յմ·
զի մերկացեալ 'ի փեսայէդ նաև զոր
գիս իւր կորոյս · քանզի մեղաք" ։
Իսկ այժ յիշեա՛ զմայր քո անբիծ
յորմէ տր մարդ ծնար · նաև ըզ
խաչ քո կենարար յորոյ վր խաչե-
ցար · ոչ առաջքն զայն ամ վր մեր
յանձնդ ընկալար · թէպտ մեղ" ։
Եթէ քննես ըզ գործս մեր և իրա-
ւամբ դատեսցես · ո՛ կարէ կեալ ա-


ռաւ

ւաչքի քոյ որ զանդորրս տեսանես ։
և մխնամանց ուր երկնի թէ ողոր_
մած ամ ես ։ Թէպէտ մեղաք և զտէրդ
մեր բարկացուցաք ։ մի՛ թողուր՛ ։

Կորին ասացեալ յամառօտս հայրապե_
տութեանն՝ մինչեւ ես պինքն ընկղմեցեալ
ի յանձնառութ կոոկէ ի եբալմութեան
ձինչս և ի հոգս, գուշ անօգնական ։

(ԺԳ)

Ով քեզ կարդամ ով ապաւէնդ բոլո_
րից, ամ, բոլորից ։ նախախնա_
մօղ և կեցուցիչ ամենից, ամ, ամե
նից ։ ոՀ․ հատուցանօղ արդարա_
պէս համայնից, ամ, համայնից,
ամենատես և քննիչ բընաւէից ։
ամ, բնաւէից ։
Սկզբնատիպ և հեղինակ պետու_
թեանց, ամ, պէ՛․ կարգաւորօղ
և զարդարիչ տէրութեց, ամ, տէ՛․
ոՀ․ Ը՛ արժանեաց իւրաքանչիւրոց
ընկալմանց, ամ, ընկալ՛․ ամենա_


ամենա

ւսոյ պարգեւատու աննախանձ ,
ա̃ձ , աննախանձ ։
Յակ ես ծառայս քոյ յետին եւ անար
ժան , ո̃ր իմ , անար" ։ որ ըստ հո
գւոյ եւ ը̃ մարմնոյ անպիտան , ո̃ր
իմ , անպէ" ։ Ո̃Հ ։ զոր կացուցեր
տնտես քումրդ մէջ տան , ո̃ր իմ ,
մէջ տան ։ եւ հովուէապետ քումրդ
հօտի բանական , ո̃ր իմ , բանա" ։
Արնամ արդէն ՚ի մէջ մեծի փառաց
ման , ո̃ր իմ , փա" ։ զի ես տկար
հօտս արտուղի ընթանան , ո̃ր իմ ,
ընթա" ։ Ո̃Հ ։ Թշնամիք շատ եւ ո̃չ
ոքէ օգնական , ո̃ր իմ , օգնական ։
ուստի մենամ յատուկ քումրդ
օգնութեան , ո̃ր իմ , օգնութե ։
Հատուր խորհրդոյս ըղնաէրս զայս ՚ի
փարել , ո̃ր իմ , ՚ի փա" ։ եւ ո̃չ սա-
տես ալեաց ծովուս ՚ի լըռել , ո̃ր
իմ , ՚ի լը" ։ Ո̃Հ ։ ահա ջանան զիս
ը̃նաէիս կլանել , ո̃ր իմ , կլա" ։
ուստի աղերշ աղաղակեմ այց
առնել , ո̃ր իմ , այց առնել ։

յՕտարաց և յընտանեաց իսկ միա-
պէս, տ͞ր իմ, միա". ՚ի յայլայնոց
և յիմոյնոց նոյնապէս, տ͞ր իմ,
նոյ": Ո՛Հ. յումանց յայտնի և ՚ի յո-
գունց ծածկապէս, տ͞ր իմ, ծած".
պէսպէս կերպիւ նետահարիմ յա-
րապէս, տ͞ր իմ, յարապէս։
Վշտման խղճալւոյ հիւանդի տագ-
նապիմ, տ͞ր իմ, տագ". և ՚ի մահ-
ձի անկեալ միայն տառտանիմ, տէր
իմ, տա": Ո՛Հ. յուսատեքէ զոք մխի-
թարիչ ոչ ունիմ, տ͞ր իմ, ոչ ու".
ուստի յառաւել ըսփոփման քոյ կա-
րօտիմ, տէր իմ, կարօտիմ։
Խղճելի է կեանքն որ ՚ի քէն հե-
ռի է, տ͞ր իմ, հե". այս է մեծ ցաւ
որ համապազ զիս մաշէ, տ͞ր իմ,
զիս": Ո՛Հ. վ͞ս այսորիկ տաղջոլիմ
միշտ՝ երբ իցէ, տ͞ր իմ, երբ իցէ,
՚ի քեզ հանգչիլ և ձերծանիլ յայս-
ցանէ, տէր իմ, յայսցանէ։
Ի՛ ճշմարիտ և անխարդախ սիրելի.
տ͞ր իմ, սիրելի". որ ոչ խաբես և ոչ

 խա

խաչիս յիրաւի, որ իմ, յի՛ս։ Ո՛հ.
որ յամառ ուրեք լինիս պիտանի, որ
իմ, պի՛։ Ձայն աղետալի քեզ լինիցի
լսելի, որ իմ, լսելի։

Նորին՝ փաղաքշելրումն հայցուածրումն
ցանկալւոյ հարսնութեանն անձին։

(ԺԴ)

Ո՛վ պանդուխտ այր դու՝ սիրե-
լի իմ. աւաղ՝ աւաղ. ընդէ՞ր այդ-
պէս փարանեցեալ տխրեալ՝ շրջիս
աւաղ. և միշտ ՚ի յոգոց հանելով
մոմոքիս։ և միշտ ՚ի յոգոց հա՜։
Ո՛վ մենացեալ դու՝ ցանկալի իմ.
աւաղ՝ աւաղ. վասն է՞ր այդքան հա
ռաչանօք ողբաս յաւէժ աւաղ.
և ըզտեսողաց աչիսըն տոչորես։ և
ըզտեսողաց։
ՈՀ, մի՞ թէ ըզբանս դու չես լուե
ալ, կամ ընթերցեալ զճառըս
նախնեաց. ընթերցի՛ր և տե՛ս զանցըս
նոցին, զոնէ գոհացի՛ր։

Զի որքան կեաս դու յաշխարհի
ոչ՝ աւաղ՝ աւաղ, ոչ կարես կեալ
աւուրց փոքրի · ապա ընդէր այդպէս
ընդ մնալմնոյդ 'ի զուր, և զհոգիդ
քո մաշես ։ ընդ մնարմնոյդ 'ի զուր,
և զհոգիդ քո մաշես ։

( Յորդորակ )

Աշխարհս է՝ ծով միշտ ալեկոծ,
տուն փորձանաց և բուն ցաւոց ·
կարծես դու մնալ 'ի սմա անա-
լէկոծ ։
Արի՛ խղճուկ արթնացի՛ր, զանօգուտ
խոկմունս 'ի բաց դի՛ր · յուսա՛ 'ի
տէր և 'ի նա ապաւինի՛ր ։
Զի նա՛ է դեղ համայն ցաւոց, և բու-
ժողիչ վշտացելոց · նա՛ է միայն և
ոչ այլ, լա՛ւ իմացի՛ր ։

( Բարոյք )

Բանական է այդքան կոծես, և
զսիրտ սիրելեաց քոց այրես · որքան
ցաւիս և մաշիս, չեսա տաս քեզ ։

Զի փայլէլք քերովբէից, ՚ի գըլու-
նել զերյս իւրաց՝ և թէ ինքն ո՛չ բա-
ճիցէ, թողուլ յա՛մ։

Կոչին՝ ՚ի գրինաց ծածանէից ոՏ։ Սրբո-
տոյս հա՛մ ստացադիրեալ ընտրհանջալուծ-
ա Ա՛Տ։ (ԺԵ)

Պ[Ա] քոց բարեացըդ լիացեալ յա-
գեցաք, ա՛ծ, յագեցաք․ հարկա-
ւորօք և կարելեօք բերկրեցաք․
ա՛ծ, բերկ"։ ո՛Հ․ արդ օրհնեսցուք
ըզքեզ՝ ՚ի նոր յեղանակ՝ ա՛ծ, յեղա"․
քանզի զոչինչ ունիմք տալ քեզ
փոխանակ, ա՛ծ, փոխանակ։
Սիրադուժար և համախուժք միա-
բան, ա՛ծ, միա"․ բարձրացուսցուք
զանուն քո ՏԷՐ յաւիտեան, ա՛ծ,
յա"։ ո՛Հ․ զի միշտ լընուս ըզպէտս
մեր անխափան, ա՛ծ, անխա"․ և ա-
ւանէլ տածես ըզմեզ քան զար-
ժանն, ա՛ծ, քան զարժանն։
՚Ի գիրկըս մօր մերոյ բազմեալ հեր-

տանամք , ած , հեշ"։ և շնորհատուա-
կալթամբ սուրբ զարդարանամք , ած ,
զար"։ Ո՛հ. 'ի ըղձաւէից հոգւոց ա-
զատ և փարթամք , ած , և փառ"։
'ի հաստարակս յատուկ փառօք ճո-
խանամք , ած , ճոխանամք ։
Մշտասխալ և յանցաւոր ծառայք
քո՝ ած , ծա"։ ոչ չեմք արժան
լսել փշրանաց սեղանոյ , ած , սե"։
Ո՛հ. և ոչ ծայրիւ մատին ջրոյ նե-
րելոյ , ած , նե"։ առատապէս միշտ
վայելեմք զբարիս քո , ած , զբա"։
Երանի թէ երբեմն 'ի միտ ածէաք ,
ած , ածէ"։ և զչարիս մեր ճանա-
չելով խոկայաք , ած , խո"։ Ո՛հ.
թէ վ̃ որոյ քրտանց մերոց փոխա-
նակ , ած , փո"։ կամ թէ որոյ ար-
դեանց ըզփարձս ընկալաք , ած"։
Օ՛հ թէ ուրքան ազնիւէ անձինք յաշ-
խարհի , ած , յաշ"։ և քան ըզմեզ
բազմապատիկ յարգելի , ած , յար"։
Ո՛հ. զուրկ յամենից հարկաւորաց՝
խղճալի , ած , խղ"։ այսպէս ցա-
ւոկք

ծովք և հեծութէք փորանին, այծ",
Նաև որքանք գոն 'ի բանաւոր կար_
կանդեալք, այծ, կար". 'ի գանա
և 'ի պէսպէս տանջանս մատնեցելք,
այծ, մատո". ո՞հ. 'ի պարտատուաց
և յիշխողաց ճնշեցեալք, այծ, ճնշ".
'ի թշնամեաց յուսադրողաց զրկե_
ցեալք, այծ, զրկեցեալք.
Ի՛ հարկ ուրեմն 'ի վերա մեր մեծա_
պէս, այծ, մեծապէս. փառաւորել
զբարերարդ յարապէս, այծ, յարա
պէս. ո՞հ. որք և խնդրեմք 'ի ներել
մեզ հայրապէս, այծ, հայրապէս.
և այց առնել ազգիս մերոյ յատկա_
պէս, այծ, յատկապէս.

Նորին ասացեալ առ ծով ներքևան՝ ի
ծաս ալէկոծութե. (ԺԶ)

Ի հատուցումն իմոց չարեաց.
զորս եղկելի անձն իմ գործեաց.
արանիմ արդար զիս քեզ մատնեց. ա_
հեղ ծով. ես պանդուխտ եմ զքեզ

 աղա

աղաչեմ ինձ ողորմեա՛ ։
Սուտ կենցաղոյս ես խաբեցայ․ ե֊
կեալ ՚ի ձեռըս քոյ անկայ , յայս
միանգամն սըխալեցայ․ ահեղ ծով․
ես պանդուխտ եմ՝ զքեզ տալս"։
Ի դուշմանէդ քո ահագին, ոսկերքս
ոչ ըղ մոմ հալէն․ և զգայութիւնս
քըս խափանին․ ահեղ ծով"։
Մինթէ զնա՛ծ ոչ ճանաչես․ թէպէտ
զաշխարհըս պատռեալ ես․ բայց նա
յոչէից արար զքեզ․ ահեղ ծով"։
Է՞ր վը՞ այդքան դու կատաղիս, մի՞
թէ և զիս կլանել կամիս․ ինև երս
դու ոչ յագիս․ ահեղ ծով․ ես"։
Ո՛վ ծով զարմարիչ քո յիշեա՛ , զի
արարած ես դու նորա․ ես քոյ տեղ
ծովքն եմ ծառայ․ ահեղ ծով"։
Ողորմած յոնանու ինձ արա՛․ հա՛ն ՚ի
փորոյդ և ազատեա՛, թէպէտ ես չեմ
նըման նըմա․ ահեղ ծով ես"։
Ո՞ քեզ հըրաման յիմ՝ ստեղծողէն․
զիս արձակեալ հանցես ՚ի քէն․ թէ
ոչ՞ բողոքեմ առ նա զքէն․ ահեղ"։

Նորին՝ Դաւանութիւն և Մաղթանք առ ՏՐ Երրորդութիւն ։ Որչափաւոր կիւ-րակէից չէք առաւօտեան ժամուն երգի ի ՏՐ Աբոտուոչն ի դպրատանն, ըստ եղանակի Նորափեղծեանցն ։

(ԺԷ)

ՈՎ՝ հզօր Հայր գթութեան · աղբիւր առատ ողորմութեան ։ պատճառ որդ-ւոյդ անեղ ծննդեան · և ՏՐ հոգ-ւոյդ անհաս բղխման ։ ընդ որս մի ՏՐ ի մի հրաման · հաստիչ բոլոր եղելութեան ։ որովք յաւէտ փառա-ւորի · երրորդութիւդ անճառ լի ։

Որդիդ ԱԾ ՏՐ և իշ խան ·
Ներկայաբարիր հօր էու թեան ։
որ ըզպատկեր քո տեսա կան ·
տեսեալ ի վիհըս կորըս տեան ։
չըհանգուցեալ սերդ անսահման ·
մերձեալ ըզնա ի յաւէր տեան ։
ուստի և մեք փառաւոր եմք ·
քըսեր անուանդ անճառ լի ։
Որ ի ծոցոյ հօր անքա ժան ·

Իջեր յարգանդըն կուսա կան ։
յորմէ ծընար ճշմարտա պէս ։
ած և մարդ միանգա մայն ։
կրեցեր ըզկիրս մերոյս բնութեան ։
Ի վըճարել զպարտս ադա մեան ։
ուստի և մեք փառաւո րեմք ։
ըզնոր անունդ անճառա լի ։
Ելեր Ի փայտըն մահա բեր ։
յոր զփրկական արեանդ հե ղեր ։
որով ըզմեզ ազատե ցեր ։
Ի գերողէն՝ և կեցու ցեր ։
Ի գերեզման մահու ի ջեր ։
և զմահացեալսըն յարու ցեր ։
ընդ որս և մեք փառաւո րեմք ։
զտնօրէնութիւնդ անճառա լի ։
Ի յերրորդումն աւուր յարեար ։
և քոյայնոցն երևե ցար ։
ըզտրտմութիւնս նոցա բար ձեր ։
և աւետեօք զուրախացու ցեր ։
արդ և ըզմեզ ուրախա ցո ։
շնորհիւ օրհնեալ յարութեան քոյ ։
ընդ որս և մեք փառաւո րեմք ։
զքո յարութիւնդ անճառա լի ։

Քանզի ահա փոքրիկ հօտ    քո ։
զոր ընտրեցար արեամբըդ    քո ։
ցիր ըզ հօտ առանց հովի    ճի ։
'ի դաշտավայրաց միշտ գիշա    տի ։
և յուսատեքէ անօգնա    կան ։
միայն 'ի քեզ ապաւէ    նի ։
արդ տէր մեր և օգնեա    մեզ ։
շնորհիւ խաչիդ անյաղթե    լի ։
Հարսնդ մաքուր և մայրըս    մեր ։
առ որ յարուկ սիրով ի    ջեր ։
որպէս այրի մնացեալ    կայ ։
ձեռն 'ի ծնօտի նստեալ ող    բայ ։
քանզի մանկամբք իւրովք ահա ։
'ի մէջ այլեաց տատանեալ    կայ ։
արդ տէր մեր և այց ա    րա ։
'ի սէր հարսինդ անապա    տի ։
Հոգւոյդ սբ աղբիւր շնոր    հաց ։
առատաբաշխ և միշտ գը    թած ։
ըզ մայրըս մեր պայծառա    ցո ։
զմանկունս որդիս քո զօրա    ցո ։
ըզ հայրապետըս մեր կե    ցո ։
և 'ի շնորհըս քո փայլե    ցո ։
'ի փառըս սբ երրորդու    թեանդ ։



այժմ

այժմ և յապայ և յաւիտեան ։

Յետ վճարման հաղորդանացս՝ մինչ ի զդրացն յառաջ կացեալ Քհյն ասասցէ պաշտօնս զայս ։

Տր̅ մեր և փրկիչ Յս̅ Քս̅ . որ յառաւել սիրով իջեր յերկնից ՚ի տեղիս յայս . և ընտրեցեր զսա լինել մայր եկեղեցեաց և շտեմարան շնորհացդ ամենայնոյ . խնայեա ՚ի սա և ՚ի մանկունս սորին . և պահեա միշտ հաստատուն ՚ի փառս ամենասրբոյ Երրորդութէդ յաւիտեանս յաւիտենից ։ ( ձայնիւ , ) Ամէն ։

Զկնի երեկոյեան հաղորդանայն ասի Քհյ . և ՚ի վերջին ձայնիւ Ամէն ։

Հոգիդ Տր̅ Ա̅Ծ . որ մխիթարիչդ ես ա̅մ և զարդարիչ . մխիթարեա զՍր̅ Աթոռ մայրս մեր և զմանկունս սորին , և զարդարեա միշտ շնորհիւդ քով՝ ՚ի փառս անուանդ քում միոյ . որում փառք յաւիտեանս ։ Ամէն ։

 Աղօթ .

Աղօթք յաղագս երգելի յեկեղեցւոջն ընդ տէր ողորմեային ։

Սուրբ Աստուած հայրըն մե   րոց ·
որ ապաւէնդ ես նեղե   լոց ·
հաս յօգնութիւն ծառայից   քոց ·
անօգնական ազգիս հայ   ոց ։
Տէր ողորմեա · Տէր ողոր″ ։

Միջնորդութեամբ սրբոյ խա   չիդ ·
և անարատ մօր ծնո   ղիդ ·
յիշեա՛ զհեղումն արեան փր   կչիդ ·
եւ ՚ի խնդիր փոքու հօ   տիդ ։
տէր ողորմեա · Տէր″ ։

Զի գիտացաք մեք հաւաս   տեաւ ·
որ չափ մեղաց մերոց լը   ցաւ ·
ուստի Տէրդ մեր բարկա   ցաւ ·
առ ՚ի խրատել զմեզ զար   թեաւ ։
տէր ողորմեա · տէր″ ։

Արդ անկանիմք առաջի   քոյ ·
գոչեմք մեղայ Տէրդ մե   րոյ ·
դարձո ՚ի մէնջ զցասումն   քոյ ·
մեծ անսպառ գթութեամբ   քոյ ։
Տէր ողորմեա · Տէր ողորմեա · տէր″ ։

Հանդերձ համարագրաց երգել տաղին։
ցուցանեն զեղանակս տաղից տէրունականս։

(Ա) Կարմիր և սպիտակ։ Դարձուէ։
(Բ) Մատախօրէն շուրջանակի։
(Գ) յԱմենայն լեզուէ երանեալ։
(Դ) Զիս քոյ սիրոյն։ պատուիրէ։
(Ե) Դրօշել կարմիր և սպիտակ։
(Զ) 'Ի յերա արեւու արև։
(Է) 'Ի քոյդ սիրոյ յագել երբէք։
(Ը) Դրօշել կարմիր և սպիտակ։
(Թ) Ղեկ հաւէտոյ մայր"։ Եւ է Ղա"։
(Ժ) Սափոր ոսկեղէն լի մանանա"։
(ԺԱ) Լսել պիտոյէ։
(ԺԲ) Անձն իմ առ քեզ աղաղա"։
(ԺԳ) Դարձեալ 'ի քոյդ սիրոյ։
(ԺԴ) Ո՛վ ղարիպ պիւլպիւլ։
(ԺԵ) Դարձեալ 'ի քոյդ սիրոյ։
(ԺԶ) Նոր գոյնէ լսել պիտոյէ։

Յիշեսջի՛ք 'ի Քս զհաստատողն տպարանիս, և զամ աշխատողսն 'ի սմա։ Նաև զհոգացողն ծախուց սորին՝ զջուղայեցի Խօջի Ջանենց Գրիգոր Աղայն՝ զօրացեն ընթեր՝ իւրայնովքն հանդերձ։ Նաև զմեզ յիշել լինի՛ք յողորմութեան։ Ամէն։